

Խորածորոյն, յոր գահավիժեին յառաջագոյն բազումք առ կարի բազմութեն,»:

Ողորմած տէր, առաքելով առ յարդութիւնդ զայս դոյզն իմ բանագրութիւն, մաղթեմ առ ՚ի տեղեկութիւն հաղորդել զայն եղբարց սրբոց հրատարակողաց Բազմավիպին. յորոց ակնունիմ եթէ այսու ևս շարժեսցեն զիրտ ազգայնոց ՚ի սէր հայրենեացն հնութեանց, և մշանչենաւորեսցեն զայսօրինակ յիշատակս նախնեաց ՚ի գիրս և ՚ի վէպս. ըստ որոյ և ձեզ որ առաւել հայրենասէրս տեսանեմ և ցանկացող ազգային յիշատակաց տակաւին երևելց յաշխարհի մերում, ըղձանամ յամենայն սրտէ զբարօրութիւն և զերկարութիւն կենաց ժամանակի և ևս ՚ի ցանկալ և հայրենասիրել. մնալով ձեզ ջերմեռանդ

Եղօնաբար ՚ի ուր

Խ. Ծ

ԱԲԷԼ. ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻՒԹԱՄԵԱՆՑ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Դաշտի գլուխ վարազը.

ԴԱԼԱՐԻ գլուխ վարազը սովորական վարազներուն տեսակներէն կը տարբերի գլխոյն այլաձեւութեամբը: Արմինյն երկայնութիւնն է 4 ոսնաշափ, բարձրութիւնը առջեւի կողմէն 2 ոսնաշափ, իսկ ետևի կողմէն 2 բթաշափ պակաս: Դրսուխը ուրիշ խոզերու համեմատութեամբ շատ տձեւ և խոշորէ. մէկ գլխաւոր տարբերութիւնն ալ է վերին ծնօտիցը ժանիքներուն մեծութիւնը, որ աւելի եղջիւրին մանաւութիւն ունին քան թէ ժանեաց, և ցուլերու եղջեր նման ետք դարձած են, ասոնց երկայնութիւնը կէս ոտք կ'ըլլայ. քիթն ալ տափակ ու խիստ կարծր, ծայրը շարժուն, ծակերը այնչափ իրարմէ հեռու, որ չեն ալ երևնար բայց եթէ

երբոր գլուխը վերցընէ. ծամելիքն ալ չափէ դուրս լայն են. վերին շրթունքը կարծր, հաստ և դէպ՚ի վար կախուածէ. միայն սեղանատամունք ունի, անոնք ալ ներսի կողմէն քթին խիստ մօտիկ են: Եկանցները շատ մեծ են, և աւելի կլոր քան թէ երկայն, որոնց ներսի կողմը դեղին բուրդով ծածկուած է: Եչուրները պղտիկ են գլխուն համեմատութեամբ, և իրարու ու ականցներուն մօտիկ. սովորական խոզերուն աչքերէն աւելի՝ աչքերուն տակը երկութաշափ կամ քիչ մը աւելի մեծ աճառէ պարկի պէս մասեր կան, որոնք տեսութեանը արգելք կ'ըլլան, և ասոնց մով ամբողջ գլուխը հրէշ մը կը ներկայացընէ մեզի, որ ինչպէս դրսուանց ասանկ ալ ներքին կազմութեամբը կը տարբերի ուրիշ խոզերէն. և կինձերուն դասին մէջ նոր տեսակ մը կը կազմէ: Ինութեամբ ալ չափէ դուրս թշնամիէ մատակ խոզերու, որով դարձեալ սովորական ձանցուած վարազներէն տարբեր տեսակ մը ըլլալը կ'իմացընէ:

Կերակուրն է ամենայն տեսակ ընդեղէն, գարի, մնրացորեն և խոտեղէն, բայց ամենէն աւելի կը սիրէ հաճարէ շինուած հացը, և զայս իրեն տուողին քովիէն չեռանար: Կերած ատենը առջեւի ուսուրներուն վրայ կը նստի, նցյալիս նաև ջուրը լակած ատենն ալ, ասոնցմէ զատ շատ անգամ ալ այսպէս ձնկի վրայ նստած կը կենայ:

Լսողութիւնը ու հոտառութիւնը սուրէ բայց տեսութիւնը տկար, մէյմը աչուրներուն պղտիկութեանը համար, երկրորդ անոնց դրիցը համար որոնք իրեն մեծ արգելք են չորս կողմը եղած առարկայները զանազանելու. և բաց ասոնցմէ՝ վերը յիշուած աչուրներուն տակի աճառէ պարկերը, որոնք շատերը ուրիշ երկու ականջ կը կարծեն:

Ես կենդանիս թէպէտ և Դաշտի գլխոյ վարազ ըսուեր է Եփրիկէի այն մասին մէջ աւելի գտնուելուն համար, բայց կը գտնուին ականջ Բարեկուսոյ գլխոյն զանազան կողմերն ալ: